



## Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկ

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{365n}}$$

### որտեղ՝

**i** - տարեկան փաստացի տոկոսադրույքն է, որն իրենից ներկայացնում է վարկառուի կրեդիտավորման ընդհանուր ծախսը՝ արտահայտված տրամադրված կրեդիտի տարեկան տոկոսով: Այն իր մեջ պարունակում է բոլոր տոկոսներն ու այլ վճարումները, որոնք վարկառուն պարտավոր է վճարել կրեդիտի ստացման, ինչպես նաև դրա գործողության ողջ ընթացքում,

**A** - տրամադրվող կրեդիտի պայմանագրային գումարն է,

**n** - կրեդիտի մարմանն ուղղված վճարի (ներառյալ՝ կրեդիտի ստացման պահին կատարվող միջնորդավճարների և այլ վճարումների) հերթական համարն է: Ընդ որում, մեկ օրվա ընթացքում կրեդիտի մայր գումարի, տոկոսագումարների և (կամ) այլ վճարումների կատարումը համարվում է մեկ վճարում:

**K** - կրեդիտի մարմանն ուղղված վերջին վճարի համարն է՝ ներառյալ նաև կրեդիտի ստացման պահին կատարվող վճարը, որից հետո պարտավորությունը համարվում է մարված:

Օրինակ՝ կրեդիտը տրամադրվել է 12 ամսով (վճարումների պարբերականությունը՝ ամենամսյա և կրեդիտի տրամադրման պահին միջնորդավճարի վճարումով), հետևաբար  $K=13$ , քանի որ մեկ վճարում իրականացվում է կրեդիտի տրամադրման պահին և ևս 12-ը՝ համաձայն կրեդիտային պայմանագրի պայմանների,

**D<sub>n</sub>** - վարկառուի կողմից մինչև կրեդիտի ստացման պահը, կրեդիտի ստացման պահին և (կամ) կրեդիտի գործողության ընթացքում կատարվելիք՝ n-րդ վճարի գումարն է,

**K<sub>n</sub>** - այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել կրեդիտի ստացման օրից մինչև կրեդիտի գումարի հերթական՝ n-րդ մարման օրը ներառյալ: Եթե պայմանագրի կնքման օրը վարկառուն վճարում է միջնորդավճար կամ որևէ այլ վճարում, ապա  $K_1=0$ :  $K_2$ -ի արժեքը հավասար է կրեդիտի տրամադրման օրվանից մինչև կրեդիտի առաջին մարման օրն ընկած ժամանակահատվածի օրերի քանակին: